

այժմս էլ այդ index-ը հռովմէական եկեղեցու քաղաքականութեան ընդունալ արտայայտութիւնն է: Այդ եկեղեցին երկու հոգեւունի. մէկը կրօնն է, որի ներկայացուցիչը քահանայութիւնն է՝ իսկ միւսը քաղաքականութիւնը, որի ներկայացուցիչները կրօնաւորական կարգերն են և կրօնաւորները: Ճառախօսը պահանջում է՝ վրակել ընդ որ կրօնաւորական կարգերը, որովհետեւ դոքա մարդկային և քաղաքացիական իրաւունքները պաշտպանող սկզբունքների դէմ են կռուում: Այդպիսի կարգեր վրակելը դեռ չի նշանակում ազատութիւնը վերացնել. ընդհակառակը կռուել այս սև ոյժերի հետ՝ նշանակում է դէպի ազատութիւն ձգտել: Կրօնական կարգի համար մարդկային իրաւունքը, մարդը նշանակութիւն չունի: Գերմանական ցեղերն ազատուելով պապական ճիրաններից անդորրութիւն են վայելում, թէ հոգեկան և թէ մարմնական զարգացմամբ անարդէլ առաջ են ընթանում: Իտալիան դէն ձգեց պապականութեան լուծը և այժմ նոր կեանք է տեսնում: Սպանիան և Լեհաստանը այդ լծի տակ հեծում են և բաժան բաժան լինում: Հասպա Ֆրանսիան: Ճառախօսը բացականչում է. «Պատասխան տուէք դիւսաւոր հարցին. Ֆրանսիան ուղում էք Հռովմին գերի դարձնել, թէ յեղափոխութեան դուստրը: Մենք կմնանք յեղափոխութեան ղինուորներ. մենք ձեռք կբերենք քաղաքացիական խաղաղութիւն, բայց ոչ այն խաղաղութիւնը, որ Հռովմն է առաջարկում: Ո՛չ ոք չի կարող մեզ խանդարել: Մեր ձեռքումն է այժմ ոյժը և մեր նպատակն է— հասնել ազատուած խղճի խաղաղութեան»:

Ճառը շատ մեծ տպաւորութիւն է թողել. նախագահ—նախարար Կոմպը և ուրիշները ջերմ շնորհակալութիւն են յայտնել ճառախօսին: Պալատը, ձայների մեծամասնութեամբ՝ 163 ընդդէմ 90-ի, համաձայն է կառավարութեան կրօնաւորական կարգերը վերացնելու խնդրի մէջ:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Աճգլիական եկեղեցի.

Դեռ շատ ժամանակ չի անցել այն օրից, երբ հեռագիրը լուր բերեց թէ Չինաստանում երկու անգլիական միսիոնարներ են սպանուել: Այս հանդամանքն ի նկատի առնելով և մէկ էլ այն, որ սպանողները հարկաւոր պատիժը չոտացան, անգլիական

դեսպանը կայսրուհուն չներկայացաւ: Երբ բոլոր դեսպանները իրենց ընտանիքներով ունկընդրութիւն ունեցան:

Այժմ էլ Կուպեր միսիոնարը սպանուել է Մարոկոյում: Ինչպէս հաղորդում է Central—News թերթը, Տանժերից ստացուած հեռագիրները այդ սպանութեան մանրամասնութիւնները հետեւեալ կերպով են նկարագրում: Սպանութիւնը կատարուել է Ֆեցում, Սուլթանի այգետղ եղած ժամանակը: Կուպերը գլխաւոր փողոցով հանգիստ դնում է. յանկարծ մի անկիւնից դուրս է գալիս մի մուկեռանդ մոլլա և դաշոյնի հարուածով սպանում է միսիոնարին: Սպանութիւնից յետոյ ոճրագործը մանում է Մուլէյ Դրիսի մզկիթը, որը Ֆեցում սրբազան տեղ է համարւում: Երբ Սուլթանը իմանում է սպանութիւնը, հրամայում է ոճրագործին մզկիթից հանել և պալատ տանել: Սակայն զինուորականները վախենում են մզկիթ մանել, որովհետեւ մահմեդականների հասկացողութեամբ մզկիթից ոճրագործին դուրս հանելը որբապղծութիւն է: Այնուամենայնիւ Սուլթանը իւր խօսքին հաստատ է մնում ու զինուորները մարդասպանին քարշ տալով տանում են դէպի մեծ մզկիթ և նորա առաջ գլխատում են: Սուլթանի վճռականութիւնը բացատրւում է նորանով, որ եթէ մի քիչ թուլութիւն ցոյց տար, քաղաքում եղած բոլոր քրիստոնեաներին կկոտորէր մահմեդական ամբոթը: Եւ իրօք, ինչպէս քննութիւնը ցոյց է տուել, այդպիսի տրամադրութիւն եղել է քաղաքում:

— Ինչպէս ամէն տարի, այնպէս էլ այս տարի Անգլիայում դումարուել է սոլիորական եկեղեցական ընդհանուր ժողով: Այս տարուայ ժողովաւորին Հորտեմպտոնն էր: Այս ժողովները առաջին անգամ սկսուել են քառասուն տարի առաջ: Որչափ նոքա սկզբում հակառակութեան են հանդիպել, նոյնքան ժամանակի ընթացքում հաստատութեան և եկեղեցական դասակարգի բուռն համակրութեան են արժանացել: Այնպէս որ ժողովականների թիւը տարէցտարի քանի գրնում աւելի և աւելի է ստուարանում, և ներկայումս այդ ժողովներն արդէն պահանջ են դարձել եկեղեցական—կրօնական դասակարգի համար: Այս ժողովներին դալիս է անգլիական եկեղեցական դասի ընտրեալ մասը, որով նոքա երկրի եկեղեցական—կրօնական դրութեան պատկերն են արտացոլում: Այս տարի ժողովը շատ բազմամարդ էր: Երկու հազար տոմսակներ էին բաժանուած, ներկայ էին շատ եպիսկոպոսներ, աստուածաբանութեան պրոֆեսորներ, աւագ երէցներ և կրթուած աշխարհականներ: Ժողովի ծրագիրը խիստ բազմազան էր և ամէն տեսակի

խնդիրներ քննութեան նիւթ եղան, մանաւանդ այնպիսիք, որոնք ժամանակակից են և հասարակութեան միտքն են զբաղեցնում: Մեծ տեղ էր տուած նաև մասնագիտական հարցերին: Հետեալ շարադրութիւններն են կարդացուել. «Ընդհանուր առտուածպաշտութիւնը անդլիական եկեղեցում», «Լեւրան քարոզի վարդապետութիւնը հասարակական պարտաւորութիւնների մասին», «Հրաշքները և Աւետարանի ընազանցական ընաւորութիւնը», «Կրօնի կարեւորութիւնը նորագոյն կեանքի փոփոխուող պայմաններում»: Այս շարադրութիւնները տաք վիճաբանութեան նիւթ եղան, և օրինակելի կերպով քննուեցան ժամանակակից եկեղեցական կեանքի պահասաւոր կողմերը:

— Անդլիական լրագիրներին նայելով կարելի է դադարաւոր կազմել, թէ ինչ մեծ կարողութիւն ունին այդ երկրի միսիոնարական ընկերութիւնները: «Աւետարան տարածող բարձր եկեղեցական ընկերութիւնը» շնորհիւ իւր նոր քարտուղար եպիսկոպոս Մոնդոմերին, մեծ դործունէութիւն է ցոյց տալիս: Անցեալ տարի այս ընկերութեան մուտքը հասել է 28,402 ֆ. ստ., մօտաւորապէս 280,000 ռուբլի: «Եկեղեցական միսիոնարական ընկերութեան» եկամուտը եղել է 327,000 ֆ. ստ., այսինքն 3,270,000 ռուբլի: Անցեալ տարուայ վերայ այս ընկերութեան մուտքը 135,000 ռ. աւելացաւ, աւելանալով և 250,000 ռուբլի ծախք, այնպէս, որ տարին 115,000 ռուբլի պարտքով է վերջանում: Ընկերութիւնը խնդրում է կամաւոր անդամներին յօգուտ ընկերութեան տարեկան կէս միլիոն ժողովել, և դանդատում է, որ միսիոնարական առարկէղին ծառայելու ցանկութիւն յայտնողները թիւը առաժանաբար քչանում է: «Լոնդոնի միսիոնարական ընկերութիւնը» անցեալ տարի մուտք է ունեցել 222,496 ֆ. ստ., այսինքն 2,224,960 ռ. և տարին վրակել է 29,468 ֆ. ստ.—295,680 ռ. պարտքով: Այս ընկերութիւնը նիւթականի կողմից այնքան էլ լաւ դրութեան մէջ չէ: Բապտիստները ունեցել են 65,961 ֆ. ստ. արդիւնք և պարտք 9,909 ֆ. ստ.: «Վեսլեեանեան միսիոնարական ընկերութիւնը» 136,528 ֆ. ստ. մուտք է ունեցել և 7000 ֆ. ստ. պարտք: Հոտլանդական ազատ եկեղեցին 72,000 ֆ. ստ. մուտք է ունեցել և 8000 ֆ. ստ. պարտք: Այս բոլորը միայն այն է ցոյց տալիս, որ նիւթականի կողմից անդլիական միսիոնարական ընկերութիւնները բաւական աննախաձեռն վիճակի մէջ են, համեմատելով գործունէութեան այն շրջանին, որ ունեն սոքա: Այդ պատճառով և հարկադրուած բարի մարդկանց նուիրաբերութիւններին են սպասում:

— Փրկութեան բանակը ժողովրդի ստորին խաւերում կարեւոր ներգործական դեր է խաղում: Այս բանակը տարածուած է քառասուն և եօթը երկիրների մէջ. բացի ընդհանուր հրամանատարից ունի 15,389 սպայ—միսիոնարներ, որոնք 7368 զօրախմբերի գլուխ են անցած: Զօրախմբերի մէջ մինչև 900,000 մարդ են հաշւում: Բանակի երաժիշտների թիւը 16,241 է. 43,430 հոգի էլ ձրիաբար զանազան պաշտօններ են վարում: Անցեալ տարի աղքատ երեխաներին 40,295 բաժին ճաշ է տուել բանակը. 5976 հոգի աղջիկ, որոնք Լանդոնի, այդ նոր Բաբելոնի փողոցներում ամօթալի կեանք էին վարում և 3000 հոգի, որոնք բանտարկութիւնից նոր էին ազատուած, այժմ բանակի ֆիլմաններում և աշխատանքի տններում (էլեւատոր) գործի են. այստեղ ստանում են կերակուր և 2—17 պենս վարձադրամ: Անցեալ տարուայ ընթացքում բանակը 6,989,983 բաժին ճաշ է տուել աղքատներին և 4,302,030 շրջմոյկի մարդկանց օգնութիւն հասցրել: «Ողջախոհութեան շաքաթը» բանակի բոլոր անդամները պարտաւոր են իրենց ամենօրեայ ծախսերից խնայողութիւն անել և խնայած գումարը տալ բանակի օգտին: Անցեալ տարուայ «Ողջախոհութեան շաքաթը» տուել է 900,000 շիլլինգ—մօտ 450,000 ռուբլի: Այս գումարի վերայ էլ գեռ աւելանում են հասարակութեան նուիրաբերութիւնները: «Հանդանակութեան շաքաթը» բանակի կանայք մարդաշատ փողոցների անկիւններում յօգուտ Փրկութեան բանակի ժողովարարութիւններ են անում:

Ամերիկական Երիցական Եկեղեցի.

Անցեալները Երիցականները նիւ-Եօրկում մի ընդհանուր ժողով են ունեցել ներքին միսսիոնի (home mission) հարիւրամեայ յօբելեանի առթիւ: Այդ ժողովին ներկայ է եղել և հասարակապետութեան նախագահ Ռուզվէլտը: Նախագահը ճառ է լսօսել և ի միջի այլոց հետեւեալն ասել. «Իւրաքանչիւր ժողովրդի համար առաջին խնդիրն է՝ ինչպէս ապահովել իւր ընտանեկան կացութիւնը և անել այն, ինչ որ անհրաժեշտ է այդ կացութեան բարւոյցման համար: Բայց այս բանում աւելի կարեւորը նիւթականը չէ, այլ հողեւորը: Նոյն իսկ նապոլէոնն ասել էր, որ պատերազմի ժամանակ բարոյականը յարաբերում է նիւթականին այնպէս, ինչպէս 10: 1: Այդպէս է նաև առօրեայ կեանքում: Ես չեմ ուզում նիւթականի նշանակութիւնը փոքրացնել: Մենք կարիք ունինք եռանդի և վաճառականական կենդանութեան, որովհետև սոքա են այն հիմքը, որի վերայ աղգային շինութիւնն է կանգ-

նում, սակայն ողորմելի կլինէր այն ժողովուրդը, որ միայն երկրայինն է կաղմուած: Մեր ժողովրդի եկեղեցիները մեծ գործի են կոչուած և պէտք է որ այդ գործը գլուխ բերեն: Մեր ժողովուրդը մեծ յաջողութիւններ է ունեցել: Բայց մեր արդիւնաբերութեան զօրեղ զարգացումը մեղ այնպիսի հարցերի դէմ առ դէմ է կանգնացրել, որոնցով պէտք է հին աշխարհի ժողովուրդները երկար ժամանակ զբաղուէին: Արդիւնաբերութեան այս յառաջագիմութիւնը նպատակեց թէ բարի և թէ չար ոյժերի զօրեղանալուն: Չար ոյժերը մեր մեծ քաղաքներում առելի են բազմանում, քան իրանք քաղաքները: Եթէ մեր ժողովուրդը ուզում է աճել, այն ժամանակ նա չար ազդեցութիւնների հակառակ այնպիսի ոյժեր պէտք է գործ դնէ, որոնք բարւոյ յաջողութեանը նպաստեն: Եւ ահա մեր եկեղեցիները պարտքն է աշխատել, որ բոլոր չար ոյժերը բարութեան փոխուին: Առանց դորան աշխարհի այն մասում, ուր մենք ենք ապրում, կեանքը միայն անասնական կողմ կունենար: Չունենանք դէպի բարութիւնը տանող ճգտում, այն ժամանակ մեր ժողովրդի կեանքը անսահման կուպիտ և նիւթապաշտ ընաւորութիւն կստանայ:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Նորին Ս. Օճութիւն Վեհ. Հայրապետը մի քանի կաթիլոր դործերի լուծումն առ տեղեալն տալու նպատակաւ սեպտեմբերի 2-ին ուղևորուեց գէպի Տփլիս:

Մինչև Ալէքսանդրապոլ ուղեկցում էր Տպարանի կառավարիչ Տ. Մատթէոս վարդապետը, իսկ մինչև Տփլիս Տ. Կարապետ և Տ. Կորիւն վարդապետներ: Նորին Սրբութիւնը միայն մի գիշեր հանգստանալով Ալէքսանդրապոլում, ամսի